ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ

REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ

MUNICIPALITY OF TALIN

0501 ք. Թալին, Գայի -1
Հեռ. (0249) 2-25-46, 2-24-19
Ֆաքս (0249) 2-31-38
Էլ. հասցե: taliniqaxaqapetaran@mail.ru

0501 t. Talin
Tel: (0249) 2-25-46, 2-24-19
Fax: (0249) 2-31-38
Email: taliniqaxaqapetaran@mail.ru

№ 056/172

«02» 11 2012 թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքային համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 2-ի ՀՀ Թալին համայնքի համայնքային սեփականություն համարվող հողերը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին թիվ 18 որոշումը և դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները կից հավելվածով:

Սույն որոշման պահանջներին համապատասխան ,դիմում եմ Ձեզ ՀՀ կառավարության համաձայնություն ստանալու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ելք
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի քաղաքաշինության
ընդհանուր բաժին
«02» 11 2012թ.
Մուտք № 9/5196-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<_02_>> նոյեմբերի 2012 թվականի N_18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ

ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով , և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թվականի հունվարի 14-ի N-14-Ա որոշմամբ կառավարության հավանությանն արժանացած Հյուսիս –հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման նպատակների համար համայնքային սեփականություն հանդիսացող հողերը օտարելու մասին,Թալին համայնքի ավագանին որոշում է .

1. Թույլատրել Թալին համայնքի ղեկավարին ՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետությանը ՝ << Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի >> նպատակների համար , և հաստատել օտարվող հողամասերի վաճառքի գները , համաձայն հավելվածի :
2. Սահմանել ,որ
   ա/հողամասի վաճառքի գինը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թվականի սեպտեմբերի 16-ի N-1274- Ն որոշմամբ սահմանված շրագրի հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի և փոխհատուցման սկզբունքների ,2012թվականի սեպտեմբերի 6-ի N 1139-Ն որոշումներով հաստատված Տրանշ -2 /Աշտարակ –Թալին / ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի պահանջների հիման վրա,
   բ/առուվաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագիրը ,ինչպես նաև պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը :
   3.Առաջարկել համայնքի ղեկավարին ՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի և սույն որոշման պահանջներին համապատասխան դիմել Արագածոտնի մարզպետին ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությունը ստանալու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Արամյան Արամ
2. Կարապետյան Արթուր
3. Մկրտչյան Սերգե
4. Դիլանյան Հայկ
5. Մարգարյան Հովհաննես
6. Գրիգորյան Սերյոժա
7. Միքայելյան Ռոստոմ
8. Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին

Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2009 թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ Շրջանակային ֆինանսավորման համաձայնագրի (Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր) և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 1 (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը (Ծրագիր), որը ներառում է Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածը:

Նշված Ծրագրի իրականացման հետևանքով Թալին համայնքի սեփականությունը հանդիսացող կից հավելվածում նշված հողամասերը ենթակա են ազդեցության:

Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհներ, կմեծանան առևտրի շրջանառությունն ու մրցակցությունը, կնվազեն փոխադրումների ծախսերը, կմեծանան առևտրային շուկաները, կզարգանա պետական և ենթատարածաշրջանային տրանսպորտային ցանցը, իսկ Թալին համայնքի համար կստեղծվեն նոր աշխատատեղերի հնարավորություններ և կմեծանա սոցիալական ծառայությունների հասանելիությունը:

Առաջարկվում է Թալին համայնքի Ծրագրով ազդեցության ենթակա հողամասերը ՀՀ հողային օրենսգրքի 66 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով՝ ուղղակի վաճառքի ձևով օտարել Հայաստանի Հանրապետությանը, ի դեմս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության:

Թալին համայնքի օտարման ենթակա հողերի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը և առաջարկվող վաճառքի գինը ներկայացված են տեղեկանքի հավելվածում:

Ազդեցության ենթակա հողամասերի փոխհատուցվող արժեքը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1274-Ն որոշմամբ սահմանված Ծրագրի հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի և փոխհատուցման սկզբունքների, 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1139-Ն և 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N1140-Ն որոշումներով հաստատված Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի պահանջների հիման:

հ/հ	Հողամասի գտնվելու վայր	Ծածկագիր	Մակերես /ք.մ./	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն	Հողի արժեքը /ՀՀ դրամ/
				ք. Թալին		
1	Թալին	228-058	55	Գյուղատնտեսական	Վարելահող	10816
2	Թալին	214-001	2384	Գյուղատնտեսական	Վարելահող	470803
3	Թալին	213-003	1310	Գյուղատնտեսական	Վարելահող	258701
4	Թալին	212-023	202	Գյուղատնտեսական	Վարելահող	30225
5	Թալին	212-022	1853	Գյուղատնտեսական	Վարելահող	377315
6	Թալին	207-001	25392	Գյուղատնտեսական	Վարելահող	1897104
7	Թալին	052-009	83	Բնակավայրային	Հասարակական	80369
8	Թալին	760 001	425	Գյուղատնտեսական	Այլ հողեր	21506
9	Թալին	718-001	2141	Գյուղատնտեսական	Այլ հողեր	108338
10	Թալին	717-001	5361	Գյուղատնտեսական	Այլ հողեր	271276
11	Թալին	716-001	306	Գյուղատնտեսական	Այլ հողեր	24962
12	Թալին	592-001	78	Գյուղատնտեսական	Այլ հողեր	8363
13	Թալին	519-001	65	Գյուղատնտեսական	Այլ հողեր	5021
14	Թալին	515-001	124	Գյուղատնտեսական	Այլ հողեր	11645
15	Թալին	513-001	13	Գյուղատնտեսական	Այլ հողեր	1574
16	Թալին	228-001	1471	Գյուղատնտեսական	Արոտ	109902
17	Թալին	227-001	35822	Գյուղատնտեսական	Արոտ	2676357
18	Թալին	216-001	3661	Գյուղատնտեսական	Արոտ	272208
19	Թալին	214-100	1922	Գյուղատնտեսական	Արոտ	184302
20	Թալին	214-090	5215	Գյուղատնտեսական	Արոտ	344670
21	Թալին	213-001	14946	Բնակավայրային	Հասարակական	9436157
22	Թալին	212-001	10536	Գյուղատնտեսական	Արոտ	885569
23	Թալին	058-001	284	Բնակավայրային	Հասարակական	239398
24	Թալին	053-014	2731	Բնակավայրային	Հասարակական	2302097
25	Թալին	623-001	514	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	տրանսպորտի	97506
26	Թալին	586-001	1636	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	տրանսպորտի	360967